

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ
ԿԻՐԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՄԱՐՍԵՅԼ ՔԱՂԱՔԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԷՋ
(ՀԱՆՐԱԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ)

Իւրաքանչիւր լեզու գոյատեւում ու զարգանում է շնորհիւ այդ լեզուն կիրառող հաղորդակցուողներին: Առանց հաղորդակցուողների կենդանի լեզու չկայ: Ինչպէս յայտնի է, սիիււքի բոլոր համայնքներում արեւմտահայ գրական տարբերակը ունի կիրառութեան սահմանափակ տարածքներ եւ այդ տարբերակով հաղորդակցուողներին բացարձակ մեծամասնութիւնը երկլեզուանի է¹:

Ներկայ յօդուածի մէջ մենք նպատակ ենք դրել կատարել հանրալեզուաբանական ուսումնասիրութիւն նուիրուած Մարսեյլ քաղաքի եւ նրա շրջակայքի հայ համայնքի մէջ հայոց լեզուի կիրառութեան ընդհանուր պայմաններին, իմա՝ հայերէն հաղորդակցուողների իմացութեան մակարդակը, գործառութեան ոլորտները, յաճախականութիւնը:

Կատարել այսպիսի ուսումնասիրութիւն հէնց Մարսեյլ քաղաքի հայ համայնքի մէջ նշանակալից է մի շարք պատճառներով:

Նախ պէտք է ասել, որ այսօր Մարսեյլը ոչ միայն Ֆրանսիայի այլեւ ամբողջ Եւրոպայի մէջ ամենահոծ ու ամենախիտ

¹ Տէ'ս Ռ. Տէր-Մեհերեմեան, Արդի գրական հայերէնի երկու նիւղերի կիրառութեան ոլորտները, Բազմալէզ, № 1-4, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1998, էջ 170-185 (Ֆրանսերէն):

հայ բնակչութիւնն ունեցող քաղաքն է: Մարսեյլ քաղաքի հայ համայնքը կազմաւորուել է 1920-ական թուականներից:

Այդ քաղաքի նաւահանգիստն են իջել ու ապաստան գտել եղեռնից մազապուրծ հազարաւոր հայեր սկսած 1920-ական թուականներին: Այսօր Մարսեյլ քաղաքի բնակչութեան 8-9 տոկոսը հայեր են՝ այսինքն մօտաւոր հաշուով 60-70 հազար հայեր ապրում են այնտեղ:

Քաղաքում գործում են երեսունից աւելի հասարակական, կրօնական, մշակութային, հայրենակցական, բարեգործական, քաղաքական, մարզական միութիւններ ու կազմակերպութիւններ: Միայն Մարսեյլ քաղաքում այսօր գործում են ութ հայ առաքելական եկեղեցիներ, երեք հայ աւետարանական եւ մէկ կաթողիկէ եկեղեցի:

Այս բոլորից ելնելով կարելի է հետեւութիւն անել, որ այդ քաղաքում գոյութիւն ունի չափազանց բուռն, գործունեայ, հայ ազգային կեանք: Հետեւաբար կարելի է եզրակացնել որ այդ համայնքի մէջ հայոց լեզուի կիրառութիւնը, լեզուական դրութիւնը ներկայացուցչական բնոյթ ունեն ամբողջ Արեւմտեան Եւրոպայի հայ համայնքների համար:

Լեզուի զարգացման հեռանկարները, նրա յարատեւութիւնն ապահովող նախադրեալներից ամենակարեւոր գործօններն են.

- տուեալ լեզուով հաղորդակցուողները քանակը
- հաղորդակցուողների լեզուական իմացութեան մակարդակը
- լեզուի կիրառութեան տարածքները
- տուեալ լեզուի կարգալիճակը, տեղը, հասարակութեան

մէջ:

Այս գործօններն ուսումնասիրելու նպատակով մարսելահայ համայնքի մէջ, ինչպէս նաեւ նրա շրջակայքում, կատարել ենք լեզուական քննախուզութիւն՝ անկետա. բնակչութեան մէջ բաժանել ենք անանուն հարցաթերթիկներ, որոնց մէջ առաջարկել ենք պատասխանել հետեւեալ հարցերին.

անձի ծննդեան թուականն ու վայրը, դպրոց յաճախել է թէ ոչ, (եթէ յաճախել է, ապա քանի տարի), նրա հայերէն իմացութեան մակարդակը, հայերէն խօսում է թէ ոչ, եթէ խօսում է,

ապա ինչ յաճախականութեամբ, ում հետ եւ որտեղ է խօսուած, եւ վերջապէս անձը հայերէն գրել-կարդալ գիտի⁶:

Ստացել ենք 630 պատասխան հարցաթերթիկներ որոնց վրայ հիմնուած է մեր ուսումնասիրութիւնը:

Այս տիպի քննախուզութեան մէջ, ամենակարեւոր խնդիրներէ մէկը հարցաթերթիկների ներկայացուցչական բնոյթն ապահովելն է, այսինքն՝ անել այնպէս, որ համայնքի տարբեր խաւերին պատկանող անձերը մասնակցեն անկետային:

Այս առիթով պէտք է ասել, որ Սփիւռքում հայ համայնքի անդամներին կարելի է բաժանել մի քանի խաւերի՝ խմբաւորումների կամ դասերի:

Խօսքը մարդկանց ըստ սոցիալական դիրքի դասակարգման մէջ չէ, ոչ էլ ըստ նրանց հայոց լեզուի իմացութեան կամ կիրառութեան մակարդակի մէջ: Այս դասակարգումը առաջարկում եմ համաձայն մարդկանց ազգային արմատների, ազգային ինքնութեան հետ ունեցած կապերի ու յարաբերութիւնների: Պատկանելով այդ նոյն հայ համայնքին, երկար տարիներ ուսումնասիրել եմ ազգային կեանքի գործընթացը եւ հիմնուելով այդ փորձի վրայ հայ համայնքի անդամներին առաջարկում եմ բաժանել 4 հիմնական խաւերի կամ դասերի.

- առաջին խաւը կ'անուանենք գերակտիւ դաս, որը կազմում է Մարտելլի հայ բնակչութեան մօտաւորապէս 0,5%-ը, այսինքն մօտ 250-300 անձեր որոնք հանդիսանում են հայ ազգային կազմակերպութիւնների՝ մշակութային, եկեղեցական, կուսակցական եւ այլն միութիւնների ղեկավար դասը: Նրանք ազգային կազմակերպութիւնների վարչական խորհուրդներին, մարմիններին անդամներ են, որոնք կազմակերպում են, շունչ են տալիս ազգային կեանքին: Այս դասը ունի հայ համայնքը ներկայացնելու բնոյթ տեղական ֆրանսիական իշխանութիւնների մօտ: Այս խմբի մէջ կարելի է հանդիպել տարբեր սերունդներին պատկանող մարդկանց, բոլորն էլ անշուշտ հայրենասնէր, ազգասէր գործունէութիւն են ծաւալում, չնայած, պէտք է ասել, որ այս բոլոր առաքինութիւններով հանդերձ, նրանցից շատերը այդ գործունէութիւնը դարձրել են անձնական կարիէրայի ասպարէզ, նրանց համար այդ պաշտօնները ընկերային, սոցիալական աստիճան՝ դիրք են ապահովում թէ՛ համայնքի մէջ թէ՛ տեղական

Փրանսիական իշխանութիւնների մօտ: Եւ յաճախ այս կամ այն պաշտօնը զբաղեցնելու համար տեղի է ունենում թէժ պայքար տարբեր անձերի միջեւ որը հեռու է ազգային-համայնքային շահերը պաշտպանելու հոգսից: Նրանց հայերէնի իմացութեան մակարդակը բաւական ցածր է, վարչական բոլոր ժողովները տեղի են ունենում ֆրանսերէն լեզուով:

- Երկրորդ խաւը՝ դա ակտիւ դասն է: Սա հայ բնակչութեան այն խաւն է, որը ոչ միայն ակտիւօրէն մասնակցում է բոլոր ազգային միջոցառումներին, այլեւ հետաքրքրւում է ազգային-համայնական կեանքով, ապրում է հայ ազգային աւանդութիւններով: Նա մասամբ տեղեակ է Հայաստանում տեղի ունեցող կարեւոր իրողութիւններին, ինչպէս նաեւ աշխարհում հայերին վերաբերող քաղաքական, մշակութային մարզական իրադարձութիւններին: Այս խաւը իր մէջ կրում է եւ ապրեցնում է ազգային բոլոր արժէքները: Այն հայ համայնքի ողնաշարն է, որը սերտօրէն կապուած է իր ազգային արմատների հետ: Այս դասը կազմում է բնակչութեան մօտ 15%-ը, մօտաւորապէս 7-8 հազար մարդ:

- Երրորդ խաւը կ'անուանենք կրաւորական դաս: Սա բնակչութեան այն մասն է որը ժամանակ առ ժամանակ, տարին 1 կամ 2 անգամ, մասնակցում է ազգային կեանքում չափազանց կարեւոր իրադարձութիւններին (օրինակ՝ Վեհափառ Հայրապետի այցը Մարսեյ): Այս խաւը հեռուից հեռու է հետեւում կամ հետաքրքրւում ազգային կեանքում տեղի ունեցող երեւոյթներին, այն չունի ազգային խորը գիտակցութիւն եւ մանաւանդ չի ապահովում ազգային արժէքների փոխանցմանը երիտասարդ սերունդներին: Կապը ազգային արմատների հետ շատ թույլ է, գրեթէ աննկատ, այն որեւէ դեր չի խաղում նրանց ամէնօրեայ կեանքում: Մեր հաշուումներով այս խաւը կազմում է բնակչութեան 30%-ը. մօտաւորապէս 18 հազար մարդ:

- Չորրորդ խաւը դա անտարբեր դասն է. որը ոչ միայն չի հետաքրքրւում ազգային, հայրենական համայնքային կեանքով, այլեւ այլեւս չի գիտակցում, կորցրել է հայ ազգային արժէքների գիտակցութիւնը: Բնակչութեան այս խաւը կարելի է համարել բոլորովին ձուլուած ֆրանսիական հասարակութեանը ու միջավայրին, նրանց ամէնօրեայ կեանքում ոչինչ չի յիշեցնում

որ նրանց նախնիները հայ են եղել: Այս խաւը կազմում է բնակչութեան 55%-ը, այսինքն մօտաւորապէս 30-35 հազար հոգի:

Այս դասակարգումը իմ անձնական ուսումնասիրութիւններդէտողութիւնների արդիւնքն է, այն չունի խիստ գիտական ճշգրիտ բնոյթ, բայց հեռու չէ իրականութիւնից:

Մեր խնդիրն էր հարցաթերթիկները բաժանել այս չորս խաւերի մէջ այնպէս, որ բոլորն էլ ունենան հաւասար ներկայացուցչական մաս ըստ համայնքի մէջ ունեցած իրենց տոկոսային յարաբերութեան:

Մեր ստացած պատասխանները (որոնք կազմում են հայ բնակչութեան 9%-ը) բաժանել ենք ըստ սերունդների:

1. 20-ական թուականներից առաջ ծնուած եւ այդ տարիների ընթացքում ծնուած անձինք, այսինքն՝ այսօր 75ից բարձր տարիքով մարդիկ:

2. 1930-ական թուականներից մինչեւ 1945 թուականը (պատերազմի վերջը) ծնուած անձեր, այսինքն՝ 58-75 տարեկան մարդիկ:

3. երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ՝ 1945ից մինչեւ 1965 թ. ծնուած անձեր, այսինքն՝ 38-58 տարեկան մարդիկ:

4. եւ վերջապէս, 1965-1985 թուականներին ծնած անձինք, այսինքն՝ 18-38 տարեկան մարդիկ:

Նախ կը ներկայացնեմ համաժամանակեայ վերլուծութիւն ամէն մէկ սերնդի համար առանձին-առանձին, որից յետոյ կը կատարեմ բոլոր սերունդների միջեւ տարժամանակեայ քննութիւն:

Առաջին սերունդ. 75-ից բարձր տարիքով մարդիկ (54 հարցաթերթիկ) Տե'ս սխեմա № 1.

Նրանցից 89%-ը խօսում է հայերէն լաւ, չնայած նրանց միայն 65%-ն է դպրոց յաճախել:

Նրանցից 35%-ը դպրոց չի յաճախել, բայց նրանց 74%-ը խօսում է հայերէն: Նրանց համար լեզուն փոխանցուել է ընտանեկան միջավայրում:

Պէտք է ասել, որ այս սերնդի մարդկանց 72%-ը Ֆրանսիայում էի ծնունել, միայն 28%-ն է ծնունել Ֆրանսիայում:

Բացի այդ, հայերէն լաւ խօսողների 72%-ն է օգտագործում հայերէնը յաճախ. միւսները չեն օգտագործում հայերէնը որովհետեւ, ինչպէս յիշեցնում են հարցաթերթիկի մէջ, խօսելու առիթ կամ տեղ չունեն:

Եւ վերջապէս, հայերէն խօսողների միայն 50%-ը գրել գիտի եւ 69%-ը կարդում է հայերէն:

Երկրորդ սերունդ. 1930-1945 թուականներին ծնուած անձեր, որոնք այսօր 58-75 տարեկան են: Այս սերնդի 73%-ն է խօսում հայերէն: Տե՛ս սխեմա № 2:

Նրանցից միայն 57%-ն է յաճախել հայկական դպրոց, որոնցից 85%-ը խօսում է հայերէն: Դպրոց յաճախողների 15%-ը հայերէն խօսել չգիտի:

Այս սերնդի ներկայացուցիչների 43%-ը դպրոց է յաճախել, որոնցից 57%-ը խօսում է հայերէն:

Այս տարիքի անձանց 83,5%-ը ծնունել է Ֆրանսիայում: Նրանցից 46%-ը հայերէն գրել գիտի եւ 47%-ը կարդում է հայերէն:

Այս սերնդի անձերի միայն 57%-ն է կիրառում հայերէնը:

Երրորդ սերունդ. 1945-1965 թվ. ծնուած անձեր, 38-58 տարեկան մարդիկ:

Այս սերնդի 56%-ն է խօսում հայերէն: Տե՛ս սխեմա N 3:

Այս սերնդի անձանց միայն 56%-ն է յաճախել դպրոց, որոնցից միայն 75%-ն է խօսում հայերէն: Դպրոց յաճախողների 25%-ը հայերէն չգիտի:

Դպրոց չյաճախողների (ընդհանուրի 44%-ը) 68%-ը հայերէն չգիտի, իսկ 32%-ը խօսել գիտի:

Այս տարիքի ներկայացուցիչների 69%-ը ծնունել է Ֆրանսիայում: 21%-ը ծնունել է ոչ Ֆրանսիայում եւ նշանակալից է որ նրանցից 10%-ը ծնունել է Հայաստանում:

Այս տարիքի անձանց 40%-ը հայերէն գրել գիտի եւ 44%-ը կարդում է հայերէն:

Միայն 52%-ն է օգտագործում հայերէնը ամէն օր կամ շաբաթը 12 անգամ:

Զորքորդ սերունդ. 1965-1985 թվ. ծնուած անձեր որոնց տարիքն է 18-ից 38 տարեկան:

Այս սերնդի 55%-ն է խօսում հայերէն: Տե՛ս սխեմա N 4:

Այս տարիքի անձանց 73%-ը յաճախել է դպրոց որոնց 62%-ը խօսում է հայերէն, բայց 38%-ը չի խօսում հայերէն:

Դպրոց չյաճախողների (27%) 38%-ը խօսում է հայերէն, առանց դպրոց յաճախելու վարժուել են հայերէն խօսելուն ընտանիքի մէջ:

Այս տարիքի անձանց 69%-ը ծնուել է Ֆրանսիայում, 9%-ը Հայաստանում եւ 22%-ը այլ երկրում:

Այս սերնդի անձանց 40%-ը գրում է հայերէն եւ 44%-ը կարդում է հայերէն:

Եւ վերջապէս, հայերէնը յաճախ են օգտագործում խօսողների միայն 52%-ը:

Այժմ անցնենք տարբեր սերունդների միջեւ լեզուի իմացութեան եւ կիրառութեան տարժամանակեայ քննութեանը ըստ տարբեր չափանիշների: Տե՛ս սխեմա N 5:

Առաջին չափանիշը հայերէն խօսելու կամ չխօսելու չափանիշն է:

Եթէ առաջին սերնդի (75ից մեծ) մարդկանց 89%-ը խօսում է հայերէն լաւ, ապա երկրորդ սերնդի (58-75 տարեկան) մարդկանց միայն 73%-ն է լաւ խօսում, իսկ երրորդ սերնդի (38-58 տարեկան) միայն 56%-ն է խօսում լաւ: Զորքորդ սերնդի ներկայացուցիչների միայն 55%-ն է լաւ խօսում հայերէն:

Ինչպէս տեսնում ենք մէկ սերնդից միւսը, աստիճանաբար հայերէն լաւ խօսողների քանակը, տոկոսային յարաբերութեամբ, պակասում է զգալիօրէն, չնայած, մէկ սերնդից միւսը բնակչութեան թիւը աւելանում է:

Նոյն երեւոյթն է պարզուամ երբ համեմատում ենք միւս չափանիշները՝ հայերէն գրել-կարդալ իմացողների եւ ընդհանրապէս հայերէնը օգտագործողների տոկոսային յարաբերութեան մէջ՝ որքան մօտենում ենք ներկայ՝ չորրորդ սերնդին, ատիճանաբար հայերէն օգտագործողների թիւը պակասում է:

Այս երեւոյթը պարզ երեւում է սխեմայի վրայ: Տէ՛ս սխեմա № 6:

Բացի այդ, պէտք է նշել որ հարցերի մէջ նշուած են քանի տարի են դպրոց յաճախել (դպրոց յաճախելու տեւողութիւնը եւ որտեղ, ինչ հանգամանքներում են մարդիկ հայերէն խօսում):

Պարզուամ է, որ դպրոց յաճախողների մեծամասնութիւնը (90%-ը) յաճախել է շաբաթօրեայ դպրոց, այն էլ միայն 1-2 տարի տեւողութեամբ, ոչ աւելի եւ այն էլ 8-10 տարեկան հասակում: Հետեւաբար, կարելի է հետեւութիւն անել, որ հայերէն խօսողների ճնշող մեծամասնութիւնը խօսել է սովորել տան պայմաններում: Լեզուի բնաւոր ուսուցումը ընտանեկան շրջապատում, չի փոխանցում գրել-կարդալու կարողութիւնը: Սրանով է բացատրւում նաեւ այն փաստը որ խօսել իմացողների 75%-ը ոչ կարդալ գիտի ոչ գրել:

Ինչ վերաբերում է «ում հետ եւ որտեղ էք խօսում» հարցին, ապա 80%-ը պատասխանում է ընտանիքի անդամների հետ կամ ընկերական շրջապատում:

Մեզ արդէն յայտնի է, որ Սփիւռքի պայմաններում, հայերէնի կիրառութեան ոլորտները, լեզուական տարածքները, չափազանց նեղ են ու սահմանափակ, լեզուն գործում է սահմանափակ միլլոհամակարգի մէջ:(1)

Այս բոլոր տուեալները կարելի է մեկնաբանել հետեւեալ կերպ.

Մեզ հետաքրքրող ամենաէական չափանիշը սերնդից սերունդ լեզուի փոխանցման չափն ու որակն է, ինչպէս նաեւ լեզուի իմացութեան մակարդակը:

Լեզուի փոխանցումը սերնդից սերունդ իրականանում է կամ դպրոցում կամ էլ համայնքային-ընտանեկան միջավայրում:

Մեր տուեալները ցոյց են տալիս որ հաղորդակցուողների զգալի մասը լեզուն սովորել են ընտանեկան միջավայրում: Այնինչ գրական լեզուի փոխանցումը մէկ սերնդից միւսը կապուած է դպրոցական համակարգի հետ:

Պարզուամ է, որ առաջին սերնդի միայն 65%-ն է յաճախել դպրոց, որոնցից 76%-ը ծնունել է ոչ Ֆրանսիայում: Ֆրանսիայում ծնուած անձանց միայն 24%-ն է յաճախել դպրոց:

Երկրորդ սերնդի միայն 57%-ն է յաճախել դպրոց, որոնց 79%-ը ծնունել է Ֆրանսիայում: Երրորդ սերնդի համար դպրոց յաճախողների տոկոսային յարաբերութիւնը 56%-ն է: Վերջապէս, չորրորդ սերնդի 73%-ն է յաճախել դպրոց: Այս թիւը բաւական բարձր է համեմատած նախորդ սերունդների հետ:

Պէտք է ասել, որ Ֆրանսիայի հայ համայնքում դպրոցական համակարգի հարցը երբեք չի լուծուել, աւելի ճիշտ դպրոցական համակարգ գոյութիւն չի ունեցել եւ այսօր էլ չունի: Պարզապէս յիշեցնենք, որ Փարիզում Միխիթարեանների Սամուէլ-Մուրատեան ամէնօրեայ դպրոցը գործել է 1928 թ. մինչեւ 1990 թիւը: Աշակերտների միջին թիւը եղել է տարեկան 100 հոգի, եւ այսօր Ֆրանսահայ երկրորդ սերնդի հայերէնը տիրապետող փոքրաթիւ մարդիկ եղել են այդ դպրոցի սաները:

Ինչպէս արդէն նշուեց, ըստ մեր քաղած տուեալների, դպրոց գնացողների մեծամասնութիւնը (90%-ը) յաճախել է շաբաթօրեայ դպրոց այսինքն՝ շաբաթը մէկ անգամ 2 ժամ դաս, այն էլ առաւելագոյնը միայն 12 կամ 3 տարի: Դրանով է բացատրուում որ այսպէս ասած դպրոց յաճախողների 75%-ը հայերէն գրել-կարդալ չգիտի: Իսկ ընտանեկան շրջապատում հայերէն խօսել սովորողները ընդհանրապէս գրել-կարդալ չգիտեն:

Պէտք է ասել, որ վերջին 10-15 տարիների ընթացքում, ամէնօրեայ դպրոցներ են բացուել, մեծ մասամբ նախակրթարաններ: Մարսելում է գործում Ֆրանսիայում միակ ամէնօրեայ երկլեզու դպրոցը՝ Համազգայինը, 250 աշակերտներով, որոնք կարող են յաճախել մանկապարտէզից մինչեւ հասունութեան ատեստատ: Դա վերաբերում է դպրոցական հասակի աշակերտութեան միայն 0,5 տոկոսին:

Ինչպէս ցոյց են տալիս N 5-6 սխեմաները եթէ առաջին սերնդից երկրորդ սերունդ եւ երկրորդ սերնդից երրորդ սերունդ հայերէն լաւ խօսողների թիւը պակասում է մօտաւորապէս 15%-ով, ապա երրորդ սերնդից չորրորդը այդ թիւը մնում է կայուն, երկու դէպքում էլ խօսողների թիւը հասնում է 56-55 %-ի: Ինչպէս տեսնում ենք, նահանջը ինչ-որ չափով կանխում է:

Դա կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով:

Նախ՝ 80-90-ական թուականներին երեւան եկած «դէպի ազգային ակունքները» շարժման շնորհիւ: Այդ շարժման հիմքում ընկած են մի շարք կարեւոր իրադարձութիւններ.

- Հայոց ցեղասպանութեանը միջազգային ճանաչում տալու մոբիլիզացնող շարժումը,
- Ղարաբաղի ազատագրական շարժումը,
- Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը,
- Հայոց լեզուն որպէս օտար լեզու ընտրելու հնարաւորութիւնը տասնամեակի աւարտական քննութիւններում ֆրանսիական լիցեյներում:

Այս բոլորը երիտասարդ սերնդի մէջ ստեղծեցին նոր միջնորոտ, էթնիք ինքնազիտակցութեան վերելք, ազգային գիտակցութեան զարթոնք՝ լեզուն սովորելու, հայոց պատմութիւնը, մշակոյթը ճանաչելու իրական պահանջ, հետաքրքրութեան աճ իրենց պապերի պատմութեան ու ապրած կեանքի հանդէպ:

Սրանով է բացատրւում հայերէն խօսողների քանակի կայունութիւնը երրորդ եւ չորրորդ սերնդների միջեւ: (Սա ցոյց է տալիս որ լեզուն սովորելու, կիրառելու պահանջը, լեզուի իմացութեան մակարդակը կապուած են զանգուածների, մասսաների սոցիալական տրամադրութիւններից):

Բացի այդ, պէտք է յիշեցնել, որ Սփիւռքում ժամանակ առ ժամանակ, պարբերաբար, տեղի են ունենում բնակչութեան տեղաշարժեր, մեծ մասամբ կապուած քաղաքական իրադարձութիւնների հետ, երկրի քաղաքական անկայունութեան հետ: Այս առումով, Մարտեյլ քաղաքում զգալի եղաւ ապաստանեալների նոր հոսք՝ 70-ական թուականներին Լիբանանից, 80-ական թուականներին Իսթանբուլից, 90-ական թուականներին Հայաստա-

նից: Մարտեյլի հայ համայնքը 23 տասնամեակների ընթացքում հարստացաւ հայոց լեզուն տիրապետող բազմաթիւ ընտանիքներով, որը անվերապահօրէն ազդեց մեր անկետայի՝ հարցախոյզի թուերի վրայ:

Ինչ վերաբերում է հայերէնը կիրառելու յաճախականութեանը, ապա առաջին սերնդի 72%-ը դառնում է 52% չորրորդ սերնդի համար: Սա ուղղակիօրէն կապուած է հայերէնի կիրառութեան միջավայրի նեղացման հետ: Յայտնի է, որ հայերէնի կիրառութեան ոլորտները Սփիւռքում, չափազանց սահմանափակ են, լեզուն գործում է միկրոհամակարգի մէջ, աստիճանաբար պակասում է հայախօս ընտանիքների քանակը:

Ինչպէս ցոյց են տալիս տոկոսային յարաբերութիւնները, մէկ սերնդից միւսը, լեզուի փոխանցումը տեղի ունենում է, իրականանում է, բայց այն թերի է, անկատար, տարէց տարի փոխանցման մակարդակը նահանջում է, փոխանցում է խօսակցական լեզուն չափազանց սահմանափակ բառապաշարով, մակարդակի, որը թոյլ չի տալիս արտայայտուել ցանկացած նիւթի շուրջ²:

Յաճախականութիւնը՝ ամիսը 1-2 անգամ, հայերէնը օգտագործողների մեծամասնութեան համար (70%-ը) ցոյց է տալիս, որ հաղորդակցողների համար լեզուն ամէնօրեայ հաղորդակցութեան միջոց չէ:

Բացի այդ, եւ որն ամենակարեւորն է, չեն փոխանցում ազգային մշակոյթի արժէքները, պատմական նշանակալից երեւոյթները, հայ մշակոյթի երեւելի գործիչները՝ հայ բանաստեղծները, գրողները մեծ մասամբ անծանօթ են նոյնիսկ հայերէնը կիրառողների խաւի մէջ: Կայ մշակութային չափազանց ցածր մակարդակ³:

² Տէս Ռ. Տէր-ՄԵՐԿԵՐԵԱՆ, Հայերէնի երկնգուռութիւնը Ֆրանսիայում. մի քանի պատկերաւոր արտայայտութիւնների օրինակը (ֆրանսերէն) in Linguistique et Slavistique, Mélanges offerts à P.Garde, Ed. Universitè de Provence, Aix-en-Provence, 1992, Vol. 2.

³ Տէս Ռ. Տէր-ՄԵՐԿԵՐԵԱՆ, Բառակերտման միջավայր եւ միջոցներ արդի արեւմտահայերէնում (հայերէն), Պատմա-բանասիրական Հանդէս N 2, Երեւան 1997, էջ 93-103:

Ընդհանրապէս, լեզուն նահանջում է եւ կամաց կամաց մարում է, երբ համայնքի մէջ այլեւս ծնունդով բնիկ հաղորդակցուողներ չկան: Բնիկ հաղորդակցուողներ ասելով հասկանում ենք այն լեզուն, որը սովորում են կեանքի սկզբից ընտանեկան եւ դպրոցական միջավայրում, անձը լիակատար տիրապետում է լեզուին եւ այդ լեզուն ծառայում է որպէս հաղորդակցութեան միջոց կեանքի բոլոր հանգամանքներում ու դառնում է մտածելու գործիք: Ներկայ պայմաններում, կարելի է ասել, որ հայ համայնքը ինքն իր միջից չի վերարտադրում լիակատար բնիկ հաղորդակցուողներ:

Մարման վտանգը սպառնում է լեզուին երբ համայնքը ինքը իր միջից չի վերարտադրում լիակատար հաղորդակցուողներ, լեզուական դիտելիքները փոխանցում են անկատար, մասնակիօրէն եւ, աստիճանաբար, լեզուն համայնքի մէջ կորցնում է իր դերը՝ որպէս հաղորդակցութեան, ազգային-մշակութային արտայայտութեան միջոց:

Ի վերջոյ, այս բոլոր նկատառումներից ելնելով, ի՞նչ ախտահանում կարելի է կատարել Մարսեյի հայ համայնքում հայոց լեզուի կիրառութեան վիճակի ու պայմանների մասին:

Թուերը ցոյց են տալիս, որ մէկ սերնդից միւսը լեզուն կորցնում է իր հիմնական ֆունկցիան, այն է՝ ծառայել որպէս միջհամայնքային հաղորդակցութեան գործիք, ազգային մշակութային արժէքները ապրեցնելու ու փոխանցելու գլխաւոր ազդակ:

Հայոց լեզուն տիրապետող զանգուածը չունի այն կիրառելու լայն ամէնօրեայ համակարգ: Լեզուի կիրառութեան տարածքները չափազանց սահմանափակ են, կիրառութեան ոլորտները՝ նեղ. ընտանիք, ընկերային միջավայր, լեզուն չունի սոցիալական ֆունկցիա, որը եւ յանգում է չափազանց սահմանափակ ու մակերեսային բառապաշարի օգտագործմանը:

Կարելի՞ է արդեօք, այս բոլոր նկատառումներից ելնելով ասել, որ լեզուն դատապարտուած է մարման մի քանի սերնդից:

Յայտնի լեզուաբան Կլոդ Հաթեֆը, իր «Կասեցնել լեզուներին մահը»⁴ աշխատութեան մէջ, թուարկում է այն նախանշանները, որոնք յանդեցնում են լեզուներին մարմանն ու մահուանը:

Դա տեղի է ունենում.

- երբ լեզուն ձեւափոխւում է,
- երբ լեզուն փոխանորդւում է (փոխարինւում է),
- երբ այլեւս չկան բնիկ հաղորդակցողներ:

Լեզուի ձեւափոխութիւնը չափազանց դանդաղ գործընթաց է, այն զգալի է դառնում հարկւրամեակներ յետոյ: Կարծում եմ այս կէտը առայժմ ուղղակիօրէն չի վերաբերում հայերէնին:

Լեզուն փոխանորդւում է երբ մէկ այլ լեզու՝ գերիշխող լեզու (սուեալ դէպքում Փրանսերէնը), աստիճանաբար փոխարինում է համայնքային լեզուն: Առաջին փուլում երկու լեզուները գոյակից են: Հաղորդակցողները անխտիր դառնում են երկլեզուանի, եւ սա իրականութիւն է Սփիւռքի բոլոր հայ համայնքների համար, յետոյ, ժամանակի ընթացքում, աստիճանաբար սերնդից սերունդ գերիշխող լեզուն դառնում է միջհամայնքային հաղորդակցութեան միջոց եւ փոխարինում է բնիկ համայնքային լեզուն: Այս գործընթացը վերաբերում է հայոց լեզուին: Այն զգալիօրէն նեղացնում է հայերէնի տեղը, կարգավիճակը հասարակութեան մէջ եւ կրճատում է հայերէնի կիրառութեան տարածքները:

Վերջապէս, լեզուն մարում է, երբ այլեւս չկան բնիկ հաղորդակցողներ կամ աւելի ճիշտ, համայնքային լեզուն ինքն իր միջից չի վերարտադրում բաւականաչափ բնիկ հաղորդակցողներ: Լեզուական կարողութիւնները փոխանցւում են անկատար թերի ձեւով: Ինչպէս տեսանք, այս գործընթացը նոյնպէս զգալի կերպով վերաբերում է հայ համայնքին:

Ահա այսպիսին է Ֆրանսիայի եւ Եւրոպայի ամենահայա-հոծ քաղաքում Մարսելում, եւ նրա շրջանում, հայոց լեզուի կիրառութեան ընդհանուր պատկերը: Թերեւս այս պատկերը չա-տերին յոռետես թուայ: Բայց թուերը յամառ են ու անփոփոխ:

⁴ Տե՛ս Կ. ՀԱԺԵԺ, Կասեցնել լեզուների մահը (Փրանսերէն) C. Ha-
gège, *Halte à la mort des langues*, Ed. Odile Jacob, Paris, 2002.

Մեր կարծիքով, կենդանի լեզուի յարատեւութիւնն ու բնականոն զարգացումն ապահովող անհրաժեշտ նախադրեալները, ներկայ պայմաններում, անբաւարար են Մարսէլի ու նրա շրջակայքի հայ համայնքի մէջ:

Հայոց լեզուն լիակատար տիրապետող փոքրաթիւ ընտրանին (էլիտան) չափաք է ծածկի, քօղարկի մակերասային հայերէն լիմացող սփիւռքի լայն զանգուածներին:

Ռոպէր Տէր-Մերկերեան

Մարտիլ ֆալաֆում հայոց լեզուի կիրառութեան համաժամանակեայ վերլուծութիւն
1920-1930 բուականներին ծնուած անձեր (75-ից աւելի տարեկան)

Սխեմա 1

54 Հարցաթերքի կէտեր		Ծնունդի տեղը		Գրութեան տեղը		Կարգութեան տեղը		ՅաճախակաՆութեան տեղը	
		Զարգացում	Աղբիւր	Այլ	Ոչ	Այլ	Ոչ	ՅաճախակաՆութեան տեղը	Զարգացում
65% դարձ յանախել են	97% լաւ են խօսում հայերէն	24%	76%	76%	24%	82%	18%	82%	18%
	3% չեն խօսում հայերէն	100%	0%	0%	100%	100%	0%	0%	100%
35% դարձ չեն յանախել	74% լաւ են խօսում հայերէն	43%	50%	7%	93%	64%	56%	79%	21%
	26% չեն խօսում հայերէն	40%	20%	0%	100%	0%	100%	20%	80%

Ընդհ. %-ները խօսում են՝ 89%, գրում են՝ 50%, կարդում են՝ 69%, օգտագ. են՝ 72%

Մարտել ֆադաֆում հայոց լեզուի կիրառություն համաժամանակայ վերլուծություն
1930-1945 բուսականներին ծնունդ առնող (58-ից 75 տարեկան)

Սխեմա 2

175 հարցաքննարկներ

		Ծնունդի են			Գրություն են		Կարգում են		Ցանկանալուն- թիվները	
		Ծնունդի միջակայ	Հարցում միջակայ	Կարգում միջակայ	Այո	Ոչ	Այո	Ոչ	Ցանկանալուն- թիվները	Հարցում միջակայ
57% դարձ յանական են	85% լուսն իստում հայերեն	79%	1%	20%	73%	27%	79%	21%	81%	19%
	15% չեն իստում հայերեն	100%	0%	0%	27%	73%	33%	67%	40%	60%
43% դարձ չեն յանական	57% լուսն իստում հայերեն	88%	5%	7%	42%	58%	37%	63%	72%	28%
	43% չեն իստում հայերեն	81%	0%	19%	0%	100%	0%	100%	1%	99%

Ընդհ. %ները խոսում են՝ 73%, գրում են՝ 46%, կարգում են՝ 47%, օգտագ. են՝ 57%

Մարտիլ ֆադաֆում հայոց լեզուի կիրառութեան համաժամանակեայ վերլուծութիւն
1945-1965 թուականներին ծնուած անձեր (38-ից 58 տարեկան)

Սխեմա 3

174 հարցաքերքիներ		Ծնունդի տարեկան		Գրութիւն		Կարգութիւն		Յաճախակիութիւն	
		Յաճախակիութիւն	Ծնունդի տարեկան	Գրութիւն	Գրութիւն	Կարգութիւն	Կարգութիւն	Յաճախակիութիւն	Յաճախակիութիւն
56% դպրոց յանտիւն էն	75% լաւ են խօսում հայերէն	19%	25%	66%	85%	15%	89%	11%	93%
	25% չեն խօսում հայերէն	96%	0%	4%	33%	67%	38%	62%	58%
44% դպրոց չեն յանտիւն	32% լաւ են խօսում հայերէն	64%	12%	24%	32%	68%	44%	56%	88%
	68% չեն խօսում հայերէն	94%	0%	6%	6%	94%	13%	87%	15%
									85%

Ընդհ. %-ները խօսում են՝ 56%, գրում են՝ 40%, կարդում են՝ 44%, օգտագ. են՝ 52%

Մարտիլ ֆաղափում հայոց լեզուի կիրառութեան համաժամանակեայ վերլուծութիւն
1965-1985 թուականներին ծնուած անձեր (18-ից 38 տարեկան)

Միտմա 4

205 հարցաքերքիկներ		Ծննդի եւ ծն		Գրութիւն եւ		Կարգութիւն եւ		Յաճախակարգութիւն	
		Տրամախա	Հարցաքերքիկ	Այո	Ոչ	Այո	Ոչ	Ունեայ	Հարցաքերքիկ
73% դարեց յամախիւ եւ	62% լա եւ խօսում հայերէն	49%	14%	87%	13%	88%	12%	95%	5%
	38% չեւ խօսում հայերէն	95%	2%	53%	47%	51%	49%	51%	49%
27% դարեց չեւ յամախիւ	38% լա եւ խօսում հայերէն	57%	10%	57%	43%	57%	43%	95%	5%
	62% չեւ խօսում հայերէն	89%	5,5%	11%	89%	11%	89%	3%	97%

Ընդհ. %-ները խօսում եւ՝ 55%, գրում եւ՝ 40%, կարդում եւ՝ 44%, օգտագ. եւ՝ 52%

Հայոց լեզուի կիրառությունը Մարսելյ ֆալաֆում
 ՀԱՅԵՐԵՆԻ ԿԻՐԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐՈՒԿԱՆ ՏԱՐԺԱՄԱՆԱԿԵԱՅ
 ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԸՍՏ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ

Սխեմա 5

	ՍԵՐՈՒՆԴ ՍԵՐՈՒՆԴ ՍԵՐՈՒՆԴ ՍԵՐՈՒՆԴ 1920/1930 1930/1945 1945/1965 1965/1985				Բոլոր սերունդները միջին փոկոսային յարաբերությունը
	89% →	73% →	56% →	55%	
Լաւ եւ խօսում հայերէն					68%
Հայերէն գրել զիպեն	50% →	46% →	40% →	40%	44%
Հայերէն կարդալ զիպեն	69% →	47% →	44% →	44%	51%
Հայերէն կիրառում եւ պարբերաբար	72% →	57% →	52% →	52%	58%
Սերնդի միջին փոկոսային յարաբերությունը	70%	56%	48%	48%	

Հայոց լեզուի կիրառությունը Մարսելի քաղաքում
ՀԱՅԵՐԵՆԻ ԿԻՐԱՌՈՒԹԱՆ ՀԱՄԱԴԱՆԱԿԱՆ ՏԱՐԺԱՄԱՆԱԿԱՑ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԸՍՏ ՄԵՐՈՒՆԴՆԵՐԻ

Սխեմա 6

	ՄԵՐՈՒՆԴ 1920 / 1930	ՄԵՐՈՒՆԴ 1930 / 1945	ՄԵՐՈՒՆԴ 1945 / 1965	ՄԵՐՈՒՆԴ 1965 / 1985
Դպրոց յաճախել են	65%	→ 57%	→ 56%	→ 73%
Դպրոց չեն յաճախել	35%	→ 43%	→ 44%	→ 27%
Ծնունդ են Ֆրանսիայում	31,5%	83,5%	69%	69%
Ծնունդ են Հայաստանում	5,5%	2%	10%	9%
Ծնունդ են ալյուր	63%	14,5%	21%	22%

Pratiques de la langue arménienne
dans la communauté arménienne de Marseille et sa région.
Etude sociolinguistique.

(Résumé)

ROBERT DER MERGUERIAN

Le présent article a pour objectif d'évaluer quantitativement et qualitativement les pratiques de la langue arménienne dans la communauté arménienne de Marseille et sa région.

Marseille est la ville ayant le plus grand nombre et la plus dense population arménienne en Europe. A ce titre, elle peut servir de référence quant à la pratique et la transmission de la langue. L'étude est fondée sur une enquête : questionnaires anonymes distribués dans les diverses couches de la communauté arménienne pour assurer la plus grande représentativité possible.

Les réponses obtenues ont été regroupées en quatre générations : 1. Les personnes âgées de plus de 75 ans (nées avant 1920 et jusqu' en 1930). 2. Celles âgées de 58 à 75 ans (nées entre 1930 et 1945). 3. Les personnes âgées de 38 à 58 ans (nées entre 1945 et 1965). 4. Celles âgées de 18 à 38 ans (nées entre 1965 – 1985.).

Après une étude synchronique pour chaque génération séparément (pourcentage des personnes ayant étudié l'arménien à l'école, ceux qui pratiquent l'arménien, la fréquence et le lieu pratiqué, le pourcentage des personnes qui écrivent et lisent l'arménien), une étude diachronique comparative entre les quatre générations révèle une assez forte diminution quantitative et une perte qualitative de la pratique de la langue arménienne d'une génération à l'autre. La transmission de la langue et de la culture arménienne s'effectue soit à l'école soit dans le milieu familial. Le système scolaire dans la communauté arménienne de France n'a jamais été structuré. La transmission de la langue dans le milieu familial est orale et n'assure pas l'apprentissage de la lecture et de l'écriture. Les espaces très réduits de la pratique de la langue diminuent sa place et sa fonctionnalité dans la communauté. Une communauté linguistique qui ne renouvelle pas d'elle – même ses locuteurs de naissance ne peut assurer la pérennité de la langue à long terme.